Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Թիմային աշխատանք, համատեղ դասավանդում. առավելություններն ու բացթողումները։

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Արև Ներսիսյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ 1. Թիմային աշխատանքի և համատեղ դասավանդման ընդհանուր բնութագիր։……4

1.1 Թիմային աշխատանք։……4

1.2 Համատեղ դասավանդման առավելություններն ու բացթողումները։……6

Գլուխ 2. Համատեղ դասավանդման իրականացում։……12

Եզրակացություն……14

Գրականության ցանկ……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բավականին երկար մտածելուց ու մի շարք աղբյուրներ ուսումնասիրելուց հետո, որոշեցինք հետազոտության մանրադիտակի տակ վերցնել թիմային աշխատանքը և համատեղ դասավանդումը:

Գաղտնիք չէ, որ երկարամյա մանկավարժական փորձ ունեցող ուսուցիչները իրենց աշխատանքում հաճախ նորամուծությունները բավականին դժվարությամբ են ընդունում: Դրա վառ օրինակներից կարող ենք նշել թղթային դասամատյանների փոխարինումը էլեկտրոնային դասամատյաններով, ուսուցչակենտրոն ուսուցումից անցում աշակերտակենտրոն ուսուցման, այսօր արդեն նոր չափորոշչային պահանջներին համապատասխան ուսուցում և այլն:

Մենք կարծում ենք, որ արհեստավարժ ուսուցիչը նա է, ով չի վախենում փոփոխություններից, չի վախենում փորձել, սխալվել ու ի վերջո փնտրել ուղիներ:Չափորոշչային պահանջների իրականացման ճանապարհին Տավուշի մարզի բոլոր ուսուցիչները, այդ թվում նաև մենք, ձգտում ենք աշխատել նորովի, գտնել ավանդական և ժամանակակից մեթոդների այն ներդաշնակ համադրությունը, որի շնորհիվ կկարողանանք ապահովել ուսուցման բարձր որակ և աշակերտների ներգրավվածության ավելի բարձր մակարդակ: Այս ամենը անհնար է պատկերացնել միայնակ. մեզ անհրաժեշտ են աջակիցներ, համախոհներ և դրա վառ տարբերակը թիմային աշխատանքն է, համատեղ դասավանդումը: Սույն աշխատանքի արդիականությունը ու կարևորությունը պայմանավորվում է վերոնշյալով:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել թիմային աշխատանքի, համատեղ դասավանդման առավելությունները ու բացթողումները:
Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել թիմային աշխատանքի, համատեղ դասավանդման վերաբերյալ առկա տեսական նյութերը:
2. Իրականացնել թիմային աշխատանք, համատեղ դասավանդում:

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ համատեղ դասավանդումը կարող է բարձր արդյունավետություն ապահովել <<Կենսաբանություն>> առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության ընտրանք ՝ 7-րդ , 8-րդ դասարանի աշակերտներ:

Հետազոտության մեթոդներն են՝ դիտում, զրույց-քննարկում, համեմատում:

Գլուխ 1. Թիմային աշխատանքի և համատեղ դասավանդման ընդհանուր բնութագիր:

1.1 Թիմային աշխատանք:

Դասավանդման մեջ խիստ կարևոր է թիմային աշխատանքը՝

թե՛ աշակերտների , թե՛ ուսուցչի և աշակերտների և թե՛ ուսուցչի և իր գործընկերների միջև: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի հոգեբանական միջավայր, որտեղ թիմային աշխատանքը կլինի արդյունավետ : Թիմային աշխատանքը հնարավորություն է տալիս յուրքանչյուր անդամի իրեն դրսևորել իր ուժեղ կողմերով և ստանալ աջակցություն իր բարելավման կարիք ունեցող կողմերը զարգացնելու համար:

Առհասարակ թիմը մարդկանց խումբ է, որը իրականացնում է ընդհանուր գործողություն :

Միշտ չէ, որ յուրաքանչյուր խումբ համարվում է թիմ: Թիմերը սովորաբար ունենում են անդամներ, որոնցից յուրաքանչյուրի վրա դրված է առանձին պարտականություններ, որոնք ծառայում են ընդհանուր նպատակի իրականացմանը: Նարեշ Ջեյնը 2009 թվականին ասել է.

Թիմի անդամները պետք սովորեն ինչպես օգնել մյուսներին հասկանալու իրենց իրական հնարավորությունները և ստեղծեն իրավիճակ, որում յուրաքանչյուրը աշխատի իր հնարավորությունների սահմանից դուրս: Թիմերը կարող են փլուզվել անգամ եթե նրանք հսկայական թիմեր են:

Թիմերը դառնում են ավելին քան մարդկանց խմբեր, եթե նրանք հասնում են մեծ հաջողությունների, որին երբեք չէին կարող հասնել անհատական աշխատանքի շնորհիվ:

Թիմը բնորոշվում է մի քանի հատկանիշներով՝

1. կազմավորվում է երկու կամ ավելի մարդկանցից,
2. ունի իր դեմքը, որը չի համընկնում նրա առանձին անդամների անհատական որակներին,
3. թիմի համար բնորոշ են հաստատված կապերը, ինչպես ներսում, այնպել էլ դրսում այլ թիմերի հետ,
4. թիմն ունի պարզ կանոնավոր կառուցվածք, որն ուղղված է առաջադրված նպատակների և խնդիրների լուծմանը:

Թիմերը ստեղծում են՝

1. համեմատաբար փոքր կոնֆլիկտներ,
2. աշխատանքի դերի ավելի լավ ընկալում,
3. առավել խորը պատասխանատվության զգացում,
4. աշխատանքից մեծ բավարարվածություն,
5. առավել խիստ վերահսկում,
6. զարգացման հնարավորություն,
7. բաց շփում,
8. դիրք, որտեղ հնարավոր է զգալ ողջ կազմակերպության արժեքները:

Թիմերը իրենց կյանքի ընթացքում անցնում են հետևյալ փուլերով՝

1. Ձևավորում – սա թիմի նախնական փուլն է, երբ մարդիկ դեռևս խումբ չեն, և նրանցից յուրաքանչյուրը փորձում է ինքնահաստատվել մյուսների մոտ որոշակի կարծիք ստեղծել իր մասին:
2. Հարմարեցում – այս փուլին հատուկ է կոնֆլիկտը, երբ խմբի անդամները փորձում են ներկայացնել իրականության համար ընկալումը, իրենց արժեքներն ու համոզմունքները, որոնք ի վերջո հարմարվում են խմբի ընդհանուր նորմերին:
3. Ստանդարտների հաստատում – խումբն ընդունում է բոլորի կողմից հաստատված այնպիսի արժեքներ ու համոզմունքներ, որոնք դառնում են խմբում վարքի նորմեր:
4. Աշխատանք – խումբը բարեհաջող կերպով կատարում է իրեն հանձնարարված աշխատանքները այն հասցնելով իր ավարտին:
5. Եզրափակում – խումբը կատարել է իրեն հանձնարարված աշխատանքները և անցնում է նոր խնդրի, եթե նոր խնդիրներ հանդես չեն գալիս խումբը ցրվում է:

Նկար 1.

1.2 Համատեղ դասավանդման առավելություններն ու բացթողումները:

Բոլոր աշակերտներին որակյալ կրթության տրամադրումը լուրջ մարտահրավեր է ուսուցիչ-ների համար: Ներառական կրթությունը պահանջում է մասնագետների և ընտանիքների կողմիցուսուցման գործընթացի վերակառուցում և երեխաների համար լավագույն կրթական միջավայրե-րի ստեղծում համատեղ ջանքերով, որպեսզի հնարավոր լինի հաջողության հասնել դպրոցականն հասարակական կյանքում: Նման համակառուցումը պահանջում է ոչ միայն ուսուցիչների հա-մագործակցություն, այլև թիմային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում: Միևնույն ժամանակայն պահանջում է դասավանդման նոր ձևեր, որոնք լավագույնս կապահովեն բոլոր ռեսուրսների պատշաճ օգտագործումը: Մինչ երկիրն անցնում է ներառական կրթության համընդհանուր կի- րառմանը, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մա- կարդակներում:Ուսուցչի օգնականների գործառույթների շրջանակն առավել հստակ է դառնումուսուցման նոր ռազմավարության՝ համատեղ դասավանդման կիրառման դեպքում, որը կտրուկ հակադրվում է սովորողների ուսուցման ավանդական մոդելին:
Համագործակցությունը ուսուցչի հետ խթանում է ուսուցչի օգնականի մասնագիտական աճը և հաստատում այն տեսակետը, որ ուսուցչի օգնականը կարող է ավելի շատ աջակցել փորձառու ուսուցչին համատեղ դասավանդման ընթացքում, քան դասապրոցեսի ընթացքում և դրանից դուրս ուսումնառությանդժվարություններ ունեցող սովորողների հետ չպլանավորված գործողություններ կատարելով: Այն ուսուցչի օգնականներին տրամադրում է ուսուցանելու իրական փորձառություն (համատեղ դասի պլանավորում, ուսուցում, արդյունքների վերլուծություն և գնահատում):
Համատեղ դասավանդումն արդյունավետ ուսումնառությանը նպաստող ուսուցման նոր մոդել է, որը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ամբողջժամանակն արդյունավետ օգտագործել և ունենալ բազմազան մեթոդների կիրառման հնարավորություն, ինչպես նաև թույլ է տալիս ուսուցիչներին ապահովել անհատական մոտեցում, նյութի մատչելիություն, իսկ սովորողներին՝ լինել ներգրավված դասապրոցեսում :

Համատեղ դասավանդման հիմնական բաղադրիչն առնվազն 2 դասավանդող մասնագետների համագործակցված աշխատանքն է, որը ներառում է սովորողների բազմազանություն, դասի պլանավորում, համատեղ դասավանդում, գնահատում՝ ամբողջ դասաժամի օպտիմալ կիրառմամբ: Այս մոդելն ունի մի շարք առավելություններ՝ մասնագիտական հմտությունների փոխանակում, սովորողների կրթական կարիքները հասկանալու ավելի մեծ հնարավորություն, ընդհանուր կրթության շրջանակներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

սովորողների համար ծրագրային նյութի յուրացման ավելի մեծ հնարավորությունների ընձեռում և այլն ։

Համատեղ դասավանդման առավելությունները սովորողների համար.

- սովորող-ուսուցիչ քանակական հարաբերակցության նվազում,
- ուսուցման ոճերի և կիրառվող մեթոդների բազմազանություն,
- մասնակցության և ներգրավվածության ցուցանիշների բարձրացում,
- առաջադիմության ապահովում,
- անհատական կարիքների և անհրաժեշտհարմարեցված միջավայրի ապահովում:

Համատեղ դասավանդումն ուսուցման այն ռազմավարություններից է, որը հիմնված է մասնագետների միջև համագործակցության վրա։

Համատեղ դասավանդման առավելություններն ուսուցիչների և համագործակցող մասնագետների համար.

- համագործակցության հմտությունների ընդլայնում,
- դիտարկելու և խնդրի լուծումը գտնելու այլընտրանքներ,
- դասավանդման այնպիսի մոտեցումների կիրառում որոնք միայնակ հնարավոր չէ իրականացնել,
- դասաժամի օպտիմալ օգտագործում,
- սովորողների կրթական կարիքների բավարարում,
- աջակցություն դասի պլանավորման և իրականացման բոլոր փուլերում,
- անհրաժեշտ տեխնիկական միջոցների, պարագաների և նյութերի համատեղ նախապատրաստում,
- միջավայրային խոչընոտների թիմային հաղթահարում,
- դասարանի առաջադիմության ապահովում,
- դասարանի կառավարման մոտեցումների կատարելագործում,
- ուսումնական պլանի առավելագույնս իրականացում,
- մետաճանաչողություն՝ ուժեղ և թույլ կողմերի վերհանում։



Գծապատկեր 1.

Համատեղ դասավանդումն իրականացվում է մի քանի տարբերակներով: Կիրառման մոդելն ընտրվում է ուսուցանվող թեմային և սովորողների բազմազանությանը համապատասխան: Մոդելներն ընտրվում են՝ հաշվի առնելով նաև, թե ովքեր են համատեղ աշխատելու, քանի որ դասավանդող ուսուցչի հետ համադասավանդող կարող է լինել ուսուցչի օգնականը, հատուկ մանկավարժը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, լոգոպեդը, այլ առարկայական ուսուցիչները, ինչպես նաև ծնողները կամ սովորողները՝ հիմնականում բարձր դասարաններից :

Տարբեր երկրներում կիրառվող համատեղ դասավանդման մոդելները բազմազան են, դրանք բոլորն էլ նպաստում են դասարանի կրթական մակարդակի բարձրացմանը, արդյունավետ ուսումնառության ապահովմանը և խթանում են սովորողների ակտիվ մասնակցությունը:

Համատեղ դասավանդման հիմնական կիրառվող մոդելները հինգն են՝

Աջակցող դասավանդում

Ուսուցման կայանների տեղափոխման մոդելով դասավանդում,

Զուգահեռ դասավանդում,

Այլընտրանքային դասավանդում,

Թիմային դասավանդում (Գծապատկեր 1)

Աջակցող դասավանդման մոդել

Այս մոդելի դեպքում ուսուցիչներից մեկը դասավանդում է՝ ստանձնելով դասարանի կառավարման դերը և տալով ընդհանուր առաջադրանքներ, իսկ երկրորդ ուսուցիչն (ուսուցչի օգնականը) օգնում է մյուսին, որպեսզի կարողանան հասնել համատեղ պլանավորած դասի նպատակին: Նախապես մշակված քայլերի միջոցով և անհատական ուղղորդումներով ուսուցչի օգնականը մոտենում է բոլոր այն սովորողներին, ովքեր ուսուցանվող նյութն ընկալելու, դասարանի կարգուկանոնին հետևելու և ինքնուրույն աշխատելու հետ կապված լրացուցիչ աջակցության կարիք ունեն՝ ապահովելով դասապրոցեսին առավելագույնսներգրավվելու և հնարավորինս

յուրացնելու նախատեսված նյութը: Այս մոդելը հնարավորություն է տալիս անհատական աջակցություն ցուցաբերել նաև ԿԱՊԿ ունեցող սովորողներին:(Գծապատկեր 2)



Գծապատկեր 2.

Ուսուցման կայանների տեղափոխման դասավանդման մոդել

Դասավանդման այս ձևում սովորողներն աշխատում են փոքր խմբերով՝ հիմնականում ըստ սովորողների գիտելիքների և կարողությունների մակարդակի, պայմանականորեն դրանք կոչվում են ուսուցման կայաններ: Դասարանում սեղանները վերադասավորվում են՝ կազմելով 3 առանձնացված կայաններ: Յուրաքանչյուր խումբն ունենում է իր առանձին նպատակը՝ կարողությունների մակարդակին համապատասխան, երբեմն նաև առանձին թեմա, եթե երկկազմ և եռակազմ դասարան է: Նախապես բաժանված խմբերն աշխատում են ուսուցման կայաններում նախօրոք ուսուցչից ստացած բանավոր կամ գրավոր հրահանգներով, աշխատանքային գործընթացն ինքնուրույն է կազմակերպվում, կամ էլ ուղղորդվում է ուսուցչի և ուսուցչի օգնականի կողմից, որոնք բաժանում են կայանները միմյանց միջև: Սովորողները դասի ընթացքումսահմանված որոշակի ժամանակահատվածում լինում են բոլոր երեք կայաններում, այսինքն՝ բոլոր երեք խմբերը դասի ընթացքում իրականացնում են նույն գործողությունները, սակայն՝ տարբեր ժամանակահատվածներում::(Գծապատկեր 3)



Գծապատկեր 3.

Զուգահեռ դասավանդման մոդել

Երկու ուսուցիչները (կամ ուսուցիչը և ուսուցչի օգնականը) միասին են պլանավորում դասը, սակայն նրանցից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում իր խմբի ուսուցման արդյունավետության համար: Դասարանում ընթանում է զուգահեռ դասավանդում՝ երկու տարբեր խմբերով: Խմբերի բաժանման սկզբունքը, որպես կանոն, կախված է լինում սովորողների գիտելիքներիկարողությունների մակարդակից կամ նրանց սովորելու ոճերի ընդհանրություններից: Յուրաքանչյուր ուսուցիչ իր խմբի հետ աշխատում է՝ կիրառելով իր ընտրած մոտեցումները, սակայն դասի նպատակը երկու խմբերում նույնն է: Սա առավել քիչ օգտագործվող մոդելներից է, որի կիրառման ժամանակ երկրորդ ուսուցիչը պետք է ուսուցանվող առարկայից գիտելիքներ ունենա:(Գծապատկեր 4)



Գծապատկեր 4.

Այլընտրանքային դասավանդման մոդել

Այս մոդելի կիրառման ընթացքում դասարանում ձևավորվում է սովորողների երկու խումբ: Դասավանդող ուսուցիչներից մեկն աշխատում է սովորողների՝ քանակով ավելի մեծ խմբի հետ, իսկ երկրորդ դասավանդողը (ուսուցչի օգնականը) միևնույն ժամանակ աշխատում է մյուս՝ ավելի փոքր խմբի հետ՝ նույն թեմայի շուրջ նախապես համատեղմշակված անհատական ծրագրով: Սա հիմնականում կիրառվում է այն սովորողներիարդյունավետ

ներգրավման ու դասավանդման համար, ովքեր ունեն ԿԱՊԿ: Մինչ մեծ խմբի հետ աշխատող ուսուցիչը հանձնարարում է սովորողներին գործնական կամ ինքնուրույն աշխատանք, մյուս ուսուցիչը փորձում է ուղղորդել և աջակցել սովորողներին վերհիշելու անցած նյութը և կատարել նախապես պլանավորած անհատական աշխատանքները: Այս տարբերակը կիրառվում է դասի մի փուլի ընթացքում, չի խրախուսվում այս մոդելով նոր նյութ հաղորդել սովորողներին:(Գծապատկեր 5)



Գծապատկեր 5.

Թիմային դասավանդման մոդել

Այս մոդելում դասավանդողներից մեկը սովորեցնում է դասի բովանդակային մասը, իսկ մյուսը լրացնում է նրան՝ միևնույն նպատակի շրջանակներում տալով հարցադրումներ, ծավալելով քննարկումներ կամ առաջարկելով գործնական աշխատանքներ սովորողների միևնույն խմբին: Դասավանդողները կարող են փոխվել դերերով կամ շարունակել այնպես, ինչպես սկսել են, շատ ավելի կարևոր է այս մոդելը նախապես պլանավորել առավել փոքր քայլերով, որպեսզի կարողանան սահուն կերպով միմյանց փոխլրացնել:Կարևոր է իմանալ՝ համատեղ դասավանդելը միշտ չէ, որ գործում է կատարյալ կերպով: Հիմնական նախադրյալն այն է, որ ուսուցիչները կարողանան միմյանց հետաձիշտ համագործակցել, նույնիսկ այն դեպքերում, երբ

նրանք ունենում են տարաձայնություններ՝ կապված դասավանդման մոդելի ընտրության, ռազմավարությունների մշակման կամ դերերի բաժանման հետ: Սկզբունքորեն կարևորվում է դասի համատեղ պլանավորումը, ինչպես նաև՝ սովորողների գնահատման և հետադարձ կապի տրամադրման փուլերի համաձայնեցված իրականացումը: Համատեղ դասավանդման հիմնական նպատակը բոլոր, այդթվում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառության որակի ապահովումն է նույն դասարանում:(Գծապատկեր 5)



Գծապատկեր 6.

Գլուխ 2. Համատեղ դասավանդման իրականացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել թիմային աշխատանքի, համատեղ դասավանդման առավելությունները ու բացթողումները:
Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել թիմային աշխատանքի, համատեղ դասավանդման վերաբերյալ առկա տեսական նյութերը:
2. Իրականացնել թիմային աշխատանք, համատեղ դասավանդում:
3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն:

Հետազոտության վարկածն է՝

Մենք կարծում ենք, որ համատեղ դասավանդումը կարող է բարձր արդյունավետություն ապահովել <<Կենսաբանություն>> առարկայի դասավանդման ընթացքում:

Հետազոտության ընտրանք ՝ 7-րդ , 8-րդ դասարանի աշակերտներ:

Հետազոտության մեթոդներն են՝ դիտում, զրույց-քննարկում, համեմատում:

Որպես համատեղ դասավանդման օրինակ, որոշեցինք 7-րդ դասարանում <<Միաշաքիլավոր և երկշաքիլավոր բույսեր>> թեման ներկայացնել ուսուցչի օգնականի հետ: Նախապես, դասից առաջ ուսուցչի օգնականի հետ միասին ևս մեկ անգամ դիտարկեցինք 7-րդ դասարանում սովորող երկու ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ները՝ կարևորելով նրանց ուժեղ կողմերը: Օրվա պլանով սահմանեցինք նրանց անելիքները, նախապատրաստեցինք խմբային և ինքնուրույն աշխատանքի հանձնարարությունները, պատրաստեցինք համապատասխան պաստառները: Դասը սկսվեց ուսուցչի՝ դասի հիմնական նպատակները, վերջնարդյունքները ներկայացնելով , որոնք պետք է ապահովեինք ուսուցչի օգնականի աջակցությամբ:

Ունեցանք աշակերտակենտրոն հրաշալի դաս, կարողացանք հասնել մեր սահմանած նպատակներին: Կատարեցին խմբային աշխատանք, որի միջոցով աշակերտները մատուցեցին դասը: Ուսուցչի օգնականը աջակցում էր խմբի անդամներին, աջակցեց նաև ուսուցչին՝ ՏՀՏ կիրառման հարցում: Խմբերի ներսում հրաշալի համագործակցային միջավայր ստեղծվեց և յուրաքանչյուր աշակերտ հստակ գիտեր իր անելիքը: ԿԱՊԿՈՒ աշակերտներից մեկը ներկեց բույսերի վեգետատիվ և գեներատիվ օրգանները և ասաց անունները, իսկ մյուս աշակերտը արտաքին հատկանիշների հիման վրա առանձնացրեց միաշաքիլավոր և երկշաքիլավոր բույսերը:

Դասապրոցեսում իրականացվեց նաև ձևավորող գնահատում : Աջակցող դասավանդման մոդելի հրաշալի օրինակ ունեցանք:

Համատեղ դասավանդում իրականացրել ենք նաև 8-րդ դասարանում՝

<< գազափոխանակությունը թոքերում և հյուսվածքներում>> թեմայով ՝ քիմիայի և ֆիզիկայի ուսուցիչների հետ:

Կենսաբանության ուսուցիչը ներկայացրեց թոքերի կառուցվածքը և առանձնահատկությունները, ֆիզիկայի ուսուցիչը ներկայացրեց բուն դիֆուզիան,իսկ քիմիայի ուսուցիչը ներկայացրեց ներշնչվող և արտաշնչվող օդի բաղադրության փոփոխման պատճառները, շմոլ գազի վտանգավորությունը: Կենսաբանության ուսուցչուհին ամփոփեց դասը՝ ներկայացնելով օդի աղտոտվածության հիմնական պատճաները և հանձնարարեց աշակերտներին մտածել, թե իրենք ինչպես կարող են մասնակցել աղտոտվածությունը նվազցնելու գործընթացին:

Քանի որ դասը պլանավորված էր երեք ուսուցիչների համատեղ ջանքերով և նպատակը մեկն էր, արդյունքը բավականին գոհացուցիչ էր:

Այս դասը համատեղ դասավանդմամբ իրականացնելուց հետո, մենք որոշեցինք, որ հաջորդ անգամ այս թեման դասավանդելիս , պետք է ներգրավել նաև <<Մաթեմատիկա>> առարկայի ուսուցչին, քանի որ այս թեմայի հետ կապված կան բազմաթիվ հետաքրքիր խնդիրներ և

<< Մաթեմատիկա>> առարկայի ուսուցչի ներգարվումը կբարձրացնի ուսումնառության արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով , մանրամասնորեն ուսումնասիրելով համատեղ դասավանդման սկզբունքները և կիրառելով դրանք << Կենսաբանություն>> առարկայի դասավանդման շրջանակներում, եկանք այն եզրակացությանը, որ համատեղ դասավանդումը կարող է բարձր արդյունավետություն ապահովել <<Կենսաբանություն>> առարկայի դասավանդման ընթացքում:

Մենք եկանք նաև այն եզրահանգմանը, որ

1.Դասի համատեղ պլանավորումը, ուսուցումը, արդունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս համատեղ դասավանդման մեջ ներգրավված բոլոր մասնակիցներին գրանցել մասնագիտական և անձնային աճ, ունենալ փորձի փոխանակման հնարավորություն:

2.Համատեղ դասավանդումը հնարավորություն է տալիս կատարել ռեսուրների արդյունավետ կառավարում:

3.Այն աշակերտները, ովքեր ունեն ուսումնառության որոշակի դժվարություններ, շահում են ուսուցիչ-աշակերտ քանակական հարաբերակցության նվազեցումից և համատեղ դասավանդման ժամանակ կիրառվող մեթոդների բազմազանությունից:

4.Համատեղ դասավանդման ընթացքում կարողանում ենք ապահովել բոլոր աշակերտների ակտիվ ներգրավվածություն դասապրոցեսին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկ Խաչատրյան, Միեր Դավթյան, «Դասավանդման ժամանակակից մոտեցումներ և մեթոդներ», երևան, 2019թ. :

2. Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ. Ա…, Գարեգինյան «Ուսուցչի օգնականի ձեռնարկ» մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն,Երևան 2022թ.:

3. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) <<Ներառական կրթության ռազմավարություններ>> դասագիրք , ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2019թ.:

4. www.aspu.am

5. hy.wikipedia.org